ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի մարտի 11-ից 13-ը Բելառուսի Հանրապետություն (Բրեստ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Շուշանիկ Ներսիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝
Բելառուսի Հանրապետություն, Բրեստ, ս.թ. մարտի 11-ից 13-ը

4. Հրավիրող կողմը՝
Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝
Մասնակցություն Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 34-րդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝
Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 34-րդ նիստի ընթացքում քննարկվել են Տրանսպորտային միջոցի սահմանը հատելու թույլտվությունների կիրառման նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացման հարցի մշակմանը, ԵԱՏՄ տարածքում tax-free համակարգի կիրառմանը, ԵԱՏՄ տարածք վտանգավոր թափոնների ներմուծման չթույլատրմանը, ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան որոշակի ապրանքների դասակարգմանը, ապրանքների տարանցման ընթացքում ռիսկերը նվազագույնի հասցնելու համար էլեկտրոնային նավիգացիոն կապարակնիքների կիրառման մոտեցումների միասնականացմանն առնչվող մի շարք հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝
Նշված միջոցառումների շրջանակներում տեղի են ունեցել երկկողմ հանդիպումներ ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների հետ, որոնց ընթացքում քննարկվել է մաքսային ոլորտին առնչվող հարցերի լայն շրջանակ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նիստի ընթացքում ստորագրվել են ընդհանուր առմամբ թվով 24 որոշումներ, որոնք վերաբերում են մաքսային գործի տարբեր բնագավառներին, այդ թվում՝ ԵԱՏՄ տարածք վտանգավոր թափոնների ներմուծման չթույլատրմանը, ԵԱՏՄ մաքսային տարածքով ապրանքների տարանցիկ փոխադրման միասնական համակարգին, ԵԱՏՄ տարածքում tax-

free համակարգի կիրառմանը, ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան որոշակի ապրանքների դասակարգմանը և այլ հարցեր: Ստորագրվել են նաև բժշկական ցուցումներով ֆիզիկական անձանց կողմից տեղափոխման ենթակա բժշկական տեխնիկայի և սարքավորումների, դրամական և այլ գործիքների ծագումը հավաստող փաստաթղթերի ցանկի ձևավորմանը, նախնական մաքսային հայտարարագրմանն առնչվող մի շարք հարցեր:

Նիստի ընթացքում ստորագրվել են նաև Միավորված կոլեգիայի և դրան կից աշխատանքային խմբերի 2019 թվականի աշխատանքային ծրագրերի իրականացման արդյունքների, ինչպես նաև վերջիններիս 2020 թվականի աշխատանքային ծրագրերի մասին որոշումները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Որոշում է կայացվել Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի հաջորդ՝ 35-րդ նիստն անցկացնել 2020 թվականի հունիս ամսին Հայաստանի Հանրապետությունում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Signed by: NERSISYAN SHUSHANIK 5308860769

18.03.2020թ.